Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«30» 12 2023 թ. № 4 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «15» 01 2024 թ.
N 1-24 նիստում, խորհրդի նախագահ՝ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ/

Քոլեջի մանկավարժական/ուսումնամեթոդական/ խորհուրդը խորհրդակցական մարմին է, որն իր գործունեությամբ կոչված է նպաստելու քոլեջում տարվող ուսումնական և մեթոդական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Քոլեջի մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի իրավասությունների ու գործունեության կարգը սահմանվում է մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի կանոնակարգով, որը քննարկվում է քոլեջի տնօրինական խորհրդում և հաստատվում կառավարման խորհրդի կողմից:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ /ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ/ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 1-ը:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի անդամների անվանական կազմը հաստատում է քոլեջի տնօրենը: Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կաբինետի վարիչները, կուրսղեկները, վարպետները և բոլոր դասախոսները: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի անդամ է:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/խորհրդի նախագահը ի պաշտոնե քոլեջի տնօրենն է: Նրա բացակայության դեպքում խորհուրդը ղեկավարում է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի քարտուղարը ընտրվում է խորհրդի անդամներից՝ նրանց պարզ մեծամասնության որոշմամբ:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի նիստերը արձանագրում է խորհրդի քարտուղարը, նիստերը ստորագրվում են նիստը նախագահողի և քարտուղարի կողմից:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների

ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է տնօրենի դիրքորոշումը:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի նիստերը տեղի են ունենում ուսումնական տարվա ընթացքում առնվազն 6 անգամ:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհուրդը քննարկում է.

- ուսումնական պլանների, առարկաների, մոդուլների չափորոշիչների և ծրագրերի նախագծերը,
- մասնագիտական կարողությունների միտված պետական կրթական չափորոշչներին համապատասխան ծրագրերի իրագործման հարցեր,
- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող լսարանային և արտալսարանային աշխատանքների կազմակերպման հարցեր,
- դասավանդման նոր և առաջավոր մեթոդների ու եղանակների ապահովման հարցեր,
- փոխադրական, պետական որակավորման քննությունների հարցաշարերը, հարցատոմսերը,
- այլ հաստատությունների հետ ուսումնամեթոդական համագործակցության հարցեր,
- պրակտիկայի կազմակերպման և բովանդակության նկատմամբ ներկայացվող պահանջներ,
- փոխադարձ դասալսումների արդյունքում ի հայտ եկած թերությունների հարթման ուղղությամբ հարցեր,
- քոլեջի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողության մասին,
- պետական որակավորող հանձնաժողովների նախագահների թեկնածուների հարցը,
- պետական որակավորող հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, որոնց հիման վրա մշակվում են ուսումնական գործընթացը կատարելագործելու առաջարկություններ,
- ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

Մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհուրդը որոշումներ է ընդունում.

- սովորողներին կուրսից-կուրս փոխադրելու կամ հեռացնելու մասին,
- որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու մասին,
- բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների ժամանակացույցի մասին,
- սովորողներին վերաքննություններ նշանակելու,
- փոխադրական, պետական որակավորման քննություններ սահմանելու մասին,
- սովորողներին քննություններին թույլատրելու մասին,
- սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մասին,
- անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին,
- ուսանողներին պարգևատրելու, խրախուսելու մասին: